ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1328-21.04.2026-ՏՏԳՇ-011/0), **«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ** (Կ-1328[1]-21.04.2026-ՏՏԳՇ-011/0), **ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ** (Կ-1328[2]-21.04.2026-ՏՏԳՇ-011/0) **ԵՎ «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ** (Կ-1328[3]-21.04.2026-ՏՏԳՇ-011/0) **ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում հանել «(այսուհետ՝ Օրենք)» ձևակերպումը, քանի որ նախագծի հետագա տեքստում այդ կրճատ անվանումը չի կիրառվում:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
2.	Կառավարություն	Օրենքի նախաբան, Հոդված 1, մաս 1	Օրենքի նպատակի և կարգավորման առարկայի ձևակերպումները լրացնել և հստակեցնել՝ ընդգծելով ոչ միայն բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանությունը և օգտագործումը, այլև կայուն օգտագործումը, պաշտպանությունը և այդ հարաբերությունների ամբողջական կարգավորումը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
3.	Կառավարություն	Հոդված 2, 1-ին	Օրենքի ամբողջ տեքստում	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

		մասի 1-ին, 4-րդ և 37-րդ կետեր, Հոդված 4-ի 3-րդ և 5-րդ մասեր, Հոդված 6-ի 2-րդ, 4-րդ և 6-րդ մասեր, Հոդված 7-ի 1-ին մաս, Գլուխ 2-ի վերնագիր, Հոդված 9, Հոդված 10-ի 1-ին մասի 4-րդ, 10-րդ և 11-րդ կետեր, Հոդված 12-ի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ և 9-րդ կետեր, Հոդվածներ 14-15, Հոդված 19, Հոդված 20-ի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ մասեր, Հոդված 22-ի 1-ին մասի 3-րդ կետ, Հոդված 27-ի 2-րդ մասի 2-րդ կետ, Հոդված 28-ի 3-րդ մաս, Հոդված 37-ի 5-րդ մասի 3-րդ կետ, Նախագծի	միասնականացնել միևնույն հասկացությունների և պետական մարմինների անվանումների կիրառությունը՝ «համայնքի ավագանի», «Կառավարություն», «պետական բյուջե», «տնտեսական (կայուն օգտագործման) գոտի», «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ», «սպորտային ձկնորսություն», «քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին», «կառավարման պայմանագիր», «հուշարձանների պահպանության բնագավառում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմին» և այլ համանման եզրույթներ»:		

		Հոդված 2-ի 2-րդ և 3-րդ մասեր			
4.	Կառավարություն	Հոդված 2, մաս 1, հոդված 10, մաս 1, կետ 25	Օրենքում սահմանել «արժեքավոր բնական էկոհամակարգի զարգացման (կառավարման) պլան» հասկացությունը և այն համապատասխանեցնել լիազորված մարմնի՝ այդ պլանները հաստատելու լիազորությանը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
5.	Կառավարություն	Հոդված 2, 1-ին մաս, 49-րդ կետ, Հոդված 10, 1-ին մաս, 11-րդ կետ, Հոդված 12, 1-ին մաս, 6-րդ կետ, Հոդված 14, 1-ին մաս, Հոդված 15, 3-րդ մաս, Հոդված 20, 7-րդ մաս, Հոդված 22, 3-րդ և 4-րդ մասեր, Հոդված 25, 5-րդ մաս, Հոդված 27, 3-րդ մաս, Հոդված 31, 2-րդ մաս, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն	Վերանայել նախագծում կիրառված «օգտագործման վճար» եզրույթը, փոխարինելով «թույլատրելի գործունեության և սպասարկման վճար» եզրույթով, հստակեցնել վճարի իրավական բնույթը, տեսակներն ու դրույքաչափերը սահմանող սուբյեկտներին, ինչպես նաև բացառել հակասությունը բնօգտագործման, տեղական կամ բնական ռեսուրսների օգտագործման համար օրենքով սահմանված վճարների հետ:	**Ընդունվել է**	**Ընդունվել է:**

		կատարելու մասին» օրենքի նախագծի Հոդված 1-ով լրացվող 41.12-րդ կետ			
6.	Կառավարություն	Հոդված 2, մաս 1, կետեր 1, 2, 4, 6, 14, 25, 35, 38 և 45	Հասկացությունների ձևակերպումները ենթարկել իրավատեխնիկական և բովանդակային խմբագրման՝ հստակեցնելով «ազգային պարկ», «տարածքագործառնական գոտի», «տնտեսական (կայուն օգտագործման) գոտի», «արգելոց», «բնության հատուկ պահպանվող տարածք», «դենդրոպարկ», «կենսաբանական բազմազանություն», «կենսոլորտային տարածք» և «պահպանման գոտի» հասկացությունների բովանդակությունը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
7.	Կառավարություն	Հոդված 2, մաս 1, նոր կետ 21 և հարակից դրույթներ	Նախագծում ներառել «կառավարող սուբյեկտ» հասկացությունը և հետագա հոդվածներում կիրառվող «կազմակերպություն» կամ «կառավարումն իրականացնող կազմակերպություն» ձևակերպումները համապատասխանեցնել այդ միասնական հասկացությանը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
8.	Կառավարություն	Հոդված 4, մասեր 6 և 7	Նախագծում լրացնել բնության հատուկ պահպանվող տարածքի սահմանների կրճատման, կատեգորիայի փոփոխության կամ հատուկ պահպանության ռեժիմի դադարեցման ընդհանուր պայմանները՝ դրանք կապելով գիտական հիմնավորման,	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			բնապահպանական հետևանքների գնահատման, հանրային քննարկման արդյունքների, զարգացման (կառավարման) պլանի կամ բնության հուշարձանի անձնագրի տվյալների և լիազորված մարմնի եզրակացության հետ		
9.	Կառավարություն	Հոդված 5, մաս 3	Հոդված 5-ի 3-րդ մասում հստակեցնել հողի վարձակալի կամ օգտագործողի պարտականությունը՝ այն կապելով սույն օրենքով, կանոնադրությամբ, զարգացման (կառավարման) պլանով, բնության հուշարձանի դեպքում՝ անձնագրով և կառավարման պայմանագրով սահմանված պահպանության և օգտագործման ռեժիմների պահանջների պահպանման հետ	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
10.	Կառավարություն	Հոդված 6, մասեր 2-3, հոդված 10, մաս 1, կետ 14	Հոդված 6-ի 2-րդ և 3-րդ մասերում, ինչպես նաև հոդված 10-ի 1-ին մասի 14-րդ կետում հստակեցնել բնության հուշարձանի կառավարման պայմանագրի կնքման կողմերը, կառավարման պայմանագրի բովանդակությունը և դրա օրինակելի ձևի հաստատման լիազորությունը	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
11.	Կառավարություն	Հոդվածներ 7 և 8	Լավարկել զարգացման (կառավարման) պլանի հաստատման և մինչև դրա հաստատումը ժամանակավոր միջոցառումների ծրագրերի կիրառման ձևակերպումները, ինչպես նաև կառավարման ծախսերի ֆինանսավորման աղբյուրների նկարագրությունը համապատասխանեցնել «կառավարող	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			սուբյեկտ» և «օրենսդրությամբ չարգելված ֆինանսական միջոցներ» ձևակերպումներին:		
12.	Կառավարություն	Հոդված 7, մաս 1	Հստակեցնել մինչև զարգացման (կառավարման) պլանի հաստատումը կառավարման հիմնական գործառույթների իրականացումը՝ «անընդհատ ռեժիմով» ձևակերպումը տեղադրելով դրույթի բովանդակային ճիշտ մասում և սահմանելով, որ այդ գործառույթներն իրականացվում են համապատասխանաբար լիազորված մարմնի կամ համայնքի ավագանու կողմից հաստատված ժամանակավոր միջոցառումների ծրագրերի հիման վրա:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
13.	Կառավարություն	Հոդվածներ 9, 10, 11 և 12	Կառավարության, լիազորված մարմնի, տարածքային կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ձևակերպումները համապատասխանեցնել նախագծի ընդհանուր տրամաբանությանը՝ ընդգրկելով ստեղծման, պահպանության, պաշտպանության, օգտագործման և կառավարման ամբողջական շրջանակը, ինչպես նաև ճշգրտելով առանձին լիազորությունների իրավատեխնիկական ձևակերպումները:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
14.	Կառավարություն	Հոդված 10, մաս 1, կետ 4	Հոդված 10-ի 1-ին մասի 4-րդ կետում լիազորված մարմնի՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների հաստատման	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			լիազորությունը համապատասխանեցնել «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի կարգավորումներին՝ Կառավարության՝ որպես հիմնադրի որոշմամբ նախատեսված դեպքերի համար:		
15.	Կառավարություն	Հոդված 11, մաս 1, կետ 1	Տարածքային կառավարման մարմինների (մարզպետների) լիազորությունը վերաշարադրել՝ հստակեցնելով նրանց մասնակցությունը բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական քաղաքականության և կառավարման բնագավառում պետական ծրագրերի մշակման գործընթացին՝ լիազորված մարմնի սահմանած ձևաչափով մարզի տարածքային առանձնահատկություններից և բնապահպանական խնդիրներից բխող հիմնավորված առաջարկություններ ներկայացնելու միջոցով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
16.	Կառավարություն	Հոդված 12, մաս 1, կետեր 1, 6, 11 և 12	Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները համապատասխանեցնել նախագծի ընդհանուր տրամաբանությանը՝ հստակեցնելով տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանության և օգտագործման ռեժիմների պահպանման նկատմամբ հսկողությունը, թույլատրելի գործունեության և սպասարկման վճարների տեսակների ու դրույքաչափերի	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			սահմանումը, ինչպես նաև բնության հուշարձանի կառավարման, պահպանության և օգտագործման գործառույթները:		
17.	Կառավարություն	Հոդված 13, մաս 2	Հոդված 13-ի 2-րդ մասից հանել գիտական ուսումնասիրությունների ֆինանսավորման աղբյուրների կրկնվող թվարկումը՝ թողնելով միայն դրանց թեմատիկ ուղղվածությունների սահմանումը զարգացման (կառավարման) պլանով	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
18.	Կառավարություն	Հոդված 16, մաս 1	Արգելոցի ստեղծման դեպքի ձևակերպումը խմբագրել՝ հստակեցնելով արգելոցի ստեղծման նպատակները՝ բնական էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների բնական վիճակի պահպանություն, բնական գործընթացների խախտում առաջացնող գործողությունների կանխում, գիտական ուսումնասիրությունների և մոնիթորինգի իրականացում, ինչպես նաև տարածքի օգտագործման թույլատրելի նպատակների շրջանակը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
19.	Կառավարություն	Հոդվածներ 16, 17, 20, 22, 25 և 27	ԲՀՊՏ տարբեր կատեգորիաների պահպանության ռեժիմների վերաբերյալ դրույթներում կատարել բովանդակային և խմբագրական հստակեցումներ՝ արգելոցի ստեղծման դեպքերի, կենդանիների և բույսերի օգտագործման բացառությունների, ազգային պարկի ջրօգտագործման դեպքերի, արգելավայրի, բնության հուշարձանի և պահպանվող	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			լանդշաֆտի թույլատրելի գործունեության ու սպասարկման վճարների կիրառման մասով:		
20.	Կառավարություն	Հոդված 17, մաս 1, կետեր 1, 6 և 12, մասեր 3-8	Արգելոցի պահպանության ռեժիմում հստակեցնել ջրային ռեսուրսների օգտագործման բացառիկ դեպքերը, գիտական հետազոտությունների և գիտական հավաքածուների ձևավորման նպատակով կենդանիների որսի, բռնելու կամ նմուշառման և բույսերի հավաքի թույլատրելիությունը, տրանսպորտային միջոցների երթևեկության սահմանափակումները, ինչպես նաև մուտքի վճարի, դրա անկանխիկ գանձման, հավասար վճարաչափերի կիրառման և անցագրի տրամադրման կարգավորումները:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
21.	Կառավարություն	Հոդված 20, մաս 3, 1-ին կետի «դ» և «ե» ենթակետեր, մաս 5, 1-ին կետի «գ», «դ» և «ե» ենթակետեր	Ազգային պարկի ռեկրեացիոն և տնտեսական (կայուն օգտագործման) գոտիներում ջրային ռեսուրսների օգտագործման արգելքից նախատեսվող բացառությունները հստակեցնել՝ ներառելով համապատասխան գոտում թույլատրված գործունեության իրականացման, ազգային պարկի ստեղծման նպատակների ապահովման և ազգային պարկի կանոնադրական խնդիրների իրականացման համար անհրաժեշտ ջրօգտագործման դեպքերը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
22.	Կառավարություն	Հոդված 20, մաս 4, կետեր 4, 5 և 7,	Ազգային պարկի ռեկրեացիոն և տնտեսական (կայուն օգտագործման)	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

		մաս 6, կետեր 3 և 4, մաս 7	գոտիներում թույլատրելի գործունեության ձևակերպումները հստակեցնել՝ սիրողական ձկնորսության, ռեկրեացիոն նպատակով հողերի տրամադրման, էկոհամակարգերի վերականգնման և կանխարգելիչ միջոցառումների, խոտհնձի, անասունների արածեցման և արոտավայրերի հերթափոխային օգտագործման մասով, ինչպես նաև վերաշարադրել թույլատրելի գործունեության և սպասարկման վճարի կիրառման դրույթը:		
23.	Կառավարություն	Հոդված 22, մաս 1, կետ 1, ենթակետեր «բ»-«դ», մասեր 3-5	Արգելավայրի պահպանության ռեժիմում հստակեցնել ջրային ռեսուրսների օգտագործման բացառությունները՝ արգելավայրի տարածքում թույլատրված գործունեության, արգելավայրի ստեղծման նպատակի և կանոնադրական խնդիրների իրականացման համար անհրաժեշտ ջրօգտագործման դեպքերի մասով, ինչպես նաև վերաշարադրել թույլատրելի գործունեության և սպասարկման վճարի գանձման, դրա տեսակների և դրույքաչափերի սահմանման կարգավորումները:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
24.	Կառավարություն	Հոդված 25, մաս 3, կետ 5 և մաս 4	Հոդված 25-ի 3-րդ մասի 5-րդ կետում և 4-րդ մասում հանել «պաշտպանության ռեժիմ» անորոշ ձևակերպումը և բնության հուշարձանի անձնագրում թողնել պահպանության և օգտագործման ռեժիմների առանձնահատկությունները:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

25.	Կառավարություն	Հոդված 25, մասեր 3-5	Բնության հուշարձանի անձնագրում «կառավարող մարմին» ձևակերպումը համապատասխանեցնել «կառավարող սուբյեկտ» հասկացությանը, պահպանության, պաշտպանության և օգտագործման ռեժիմների ձևակերպումները միասնականացնել, ինչպես նաև բնության հուշարձանի կառավարող սուբյեկտի կողմից մատուցվող ծառայությունների և ենթակառուցվածքների սպասարկման դիմաց գանձվող թույլատրելի գործունեության և սպասարկման վճարի կարգավորումը հստակեցնել:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
26.	Կառավարություն	Հոդված 27, մաս 1, կետ 1, ենթակետեր «գ»-«ե», մաս 2, կետեր 2, 5 և 7, մաս 3	Պահպանվող լանդշաֆտի պահպանության և օգտագործման ռեժիմում հստակեցնել ջրային ռեսուրսների օգտագործման բացառությունները՝ թույլատրված գործունեության, պահպանվող լանդշաֆտի ստեղծման նպատակի և կանոնադրական խնդիրների իրականացման համար անհրաժեշտ ջրօգտագործման դեպքերի մասով, ինչպես նաև խմբագրել էկոլոգիական զբոսաշրջության ենթակառուցվածքների, խոտհնձի վայրերի, ժամկետների և պայմանների, կանխարգելիչ և վերականգնման միջոցառումների և թույլատրելի գործունեության ու սպասարկման վճարի դրույթները:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
27.	Կառավարություն	Գլուխ 9	Գլուխ 9-ը կազմված է մեկ հոդվածից,	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			անհրաժեշտ է վերակազմավորել այնպես, որ համասեռ հոդվածները ներառվեն նույն գլխում:		
28.	Կառավարություն	Գլուխ 9, Հոդվածներ 28-30 և հետագա հոդվածների համարակալում	Գլուխ 9-ը վերախմբագրել՝ դրա մեջ ներառելով բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, վերահսկողության և օրենքի խախտման համար պատասխանատվության դրույթները, իսկ հետագա հոդվածների համարակալումը համապատասխանեցնել կատարված կառուցվածքային փոփոխություններին:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
29.	Կառավարություն	Հոդված 28, մասեր 1-3, հոդվածներ 29 և 30	Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, վերահսկողության և օրենքի խախտման համար պատասխանատվության վերաբերյալ դրույթները վերակազմակերպել նոր գլխի ներքո՝ ամրագրելով հանրապետական նշանակության ԲՀՊՏ-ների պահպանության իրականացումը Էկոպարեկային ծառայության կողմից, տեղական նշանակության ԲՀՊՏ-ների պահպանության առանձնահատկությունները, պետական սահմանի սահմանային գոտում գտնվող ԲՀՊՏ-ների նկատմամբ կիրառվող կարգավորումները, վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի լիազորությունը և օրենքի խախտման համար պատասխանատվությունը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

30.	Կառավարություն	Հոդված 30	Հոդված 30-ում օրենքի անվանումը հիշատակել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ որպես «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենք:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
31.	Կառավարություն	Հոդվածներ 31 և 32	Բնության հատուկ պահպանվող տարածքների օգտագործողների վերաբերյալ հոդվածների համարակալումը համապատասխանեցնել կառուցվածքային փոփոխություններին և օգտագործման վճարի վերաբերյալ նախկին ընդհանուր ձևակերպումները փոխարինել թույլատրելի գործունեության և սպասարկման վճարի նոր կարգավորմամբ՝ վճարներից գոյացած միջոցների օգտագործումը կապելով կառավարող սուբյեկտի կանոնադրությամբ կամ կառավարման պայմանագրով նախատեսված նպատակների հետ:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
32.	Կառավարություն	Հոդվածներ 33, 34 և 35	Պահպանման գոտու, էկոլոգիական ցանցի և կենսոլորտային տարածքի վերաբերյալ դրույթներում կատարել լեզվական և իրավատեխնիկական հստակեցումներ՝ բացառելով ոչ հստակ կամ ծանր ձևակերպումները և ապահովելով տերմինների միասնական կիրառությունը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
33.	Կառավարություն	Հոդված 37, հոդված 10, մաս 1, կետ 22	Հոդված 37-ում սահմանել միջգերատեսչական հանձնաժողովի կարգավիճակը, կազմավորման ընդհանուր սկզբունքները, անդամների շրջանակը, որոշումների խորհրդատվական բնույթը,	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			անհատական կազմի և աշխատակարգի հաստատման լիազորությունը		
34.	Կառավարություն	Նախագծի հոդված 2	Նախագծի եզրափակիչ և անցումային դրույթների հոդվածից հանել վերնագիրը և շտկել հոդվածի մասերի համարակալումը՝ դրանք համարակալելով 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
35.	Կառավարություն	Նախագծի Հոդված 2, մասեր 2 և 3	Եզրափակիչ և անցումային դրույթներում «իրավական ակտեր» ընդհանուր ձևակերպումը փոխարինել «ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր» ձևակերպմամբ՝ օրենքից բխող ակտերի իրավական բնույթը հստակեցնելու նպատակով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ					
37.	Կառավարություն	Հոդված 1	Հոդված 1-ից հանել «և 41.15-րդ»-ը՝ լրացվող կետերի շրջանակը համապատասխանեցնելով փաստացի նախատեսվող 41.11-րդ, 41.12-րդ, 41.13-րդ և 41.14-րդ կետերին:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
38.	Կառավարություն	Հոդված 1	Հոդված 1-ի լրացումը ձևակերպել որպես մեկ միասնական լրացում՝ Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնելով նոր 41.11-րդ, 41.12-րդ, 41.13-րդ և 41.14-րդ կետերով՝ առանց լրացվող կետերի առաջ լրացուցիչ արտաքին համարակալման:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
39.	Կառավարություն	Հոդված 1	Իրականացնել խմբագրական շտկումներ:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
40.	Կառավարություն	Հոդված 2	Իրականացնել խմբագրական շտկում	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			«հողամասերից» բառի հետ կապված այն համապատասխանեցնելով հոդվածի բովանդակությունը:		
41.	Կառավարություն	Հոդված 3-ի 1-ին մաս	Հոդված 3-ի 1-ին մասում իրականացնել խմբագրական շտկումներ՝ «հողերի վրա գտնվող» հասկացության հետ կապված:	**Ընդունվել:**	**Ընդունվել է:**
42.	Կառավարություն	Հոդված 3-ի 2-րդ մաս	Հոդված 3-ի 2-րդ մասում բնության հուշարձանների պայմանագրի ձևակերպումը համապատասխանեցնել ԲՀՊՏ օրենքի նախագծին, ինչպես նաև ներառել ԲՀՊՏ-ների պահպանության և օգտագործման գործառույթները, համահունչ ԲՀՊՏ օրենքով սահմանված՝ ԲՀՊՏ-ների նկատմամբ գործառույթների տրամաբանությանը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է:**
43.	Կառավարություն	Հոդված 1, լրացվող 41.11-րդ և 41.14-րդ կետեր	Տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածք ստեղծելու և մոնիթորինգի կազմակերպումն ապահովելու վերաբերյալ ավագանու լիազորությունները հստակեցնել՝ նախատեսելով լիազորված մարմնի հետ նախնական համաձայնեցման պահանջը (ինչն առկա է ԲՀՊՏ օրենքի նախագծում) և որոշում ընդունելու իրավական ձևակերպումը:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
44.	Կառավարություն	Հոդվածներ 1-3	Նախագծի տեքստում կատարել իրավատեխնիկական, կետադրական և լեզվական շտկումներ՝ չակերտների, ստորակետների, վերջակետերի, կետերի փակման և «հետևյալ բովանդակությամբ»	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			ձևակերպման կիրառությունը միասնականացնելու համար::		
ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ					
45.	Կառավարություն	Վերնագիր	Նախագծի վերնագիրը համապատասխանեցնել նախագծի բովանդակությանը՝ «Փոփոխություններ» բառից հետո լրացնելով «և լրացումներ» բառերը, քանի որ նախագծով Օրենսգրքում կատարվում է նաև լրացում:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
46.	Կառավարություն	Հոդվածներ 1, 3, 4, 5 և 7	Նախագծերի փաթեթի ներքին համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ հողային օրենսգրքի փոփոխվող դրույթներում կիրառվող տերմինաբանությունը համապատասխանեցնել ԲՀՊՏ օրենքի նախագծին՝ «անտառպարկ», «կենսոլորտային տարածք», «բուսաբանական այգի», «դենդրոպարկ» և հարակից ձևակերպումների մասով, ինչպես նաև կատարել անհրաժեշտ տեխնիկական և լեզվական հստակեցումներ:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
47.	Կառավարություն	Հոդվածներ 1, 3, 5, 6 և 7	Նախագծում կատարել իրավատեխնիկական և լեզվական շտկումներ՝ «Օրենսգիրք» կրճատ անվանման, կետադրության, հոդվածների ներսում «հետևյալ բովանդակությամբ» ձևակերպման և 77-րդ հոդվածի 1.1-ին մասի հղման ճշգրտման մասով:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
48.	Կառավարություն	Հոդված 4, 1-ին	Բնապահպանական պահանջների	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

		մաս, 11-րդ կետ	պահպանման կամ որոշակի աշխատանքներ կատարելու պայմանների ցանկը խմբագրել՝ Կարմիր գրքերում գրանցված բույսերի աճելավայրերի և կենդանիների ապրելավայրերի, կանաչապատ տարածքների, բուսաբանական այգիների, անտառպարկերի, դենդրոպարկերի և հնէաբանական օբյեկտների ձևակերպումները հստակեցնելու նպատակով:		
49.	Կառավարություն	Հոդված 7	Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1.1-ին մասի նոր խմբագրությունը վերաշարադրել ավելի հստակ կառուցվածքով՝ լիազոր մարմնի կողմից անտառների, անտառային հողերի և ԲՀՊՏ բնապահպանական հողերի օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգավորումը ճիշտ հաջորդականությամբ ներկայացնելու համար:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ					
50.	Կառավարություն	Վերնագիր	Նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով, քանի որ նախագծով կատարվում են մեկից ավելի փոփոխություններ և լրացումներ:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**
51.	Կառավարություն	Հոդված 1	Հոդված 1-ում սահմանել «Բնապահպանական վերահսկողության	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**

			մասին» օրենքի կրճատ անվանումը՝ «այսուհետ՝ Օրենք», որպեսզի նախագծի հետագա հոդվածներում կիրառվող հղումները լինեն իրավատեխնիկապես հստակ:		
52.	Կառավարություն	Հոդվածներ 1, 2 և 3	Նախագծում կատարել իրավատեխնիկական և կետադրական շտկումներ՝ 1-ին հոդվածի ենթակետերը համարակալելու, 22-րդ հոդվածին հղումը ճիշտ ձևակերպելու, ինչպես նաև 35-րդ և 36-րդ հոդվածների լրացման ձևակերպումը «բառերը» եզրույթով ավարտելու համար:	**Ընդունվել է:**	**Ընդունվել է:**